



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ. փոստ kotayk@mta.gov.am

_____ N _____

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Միրելի՛ Քաղաքացի,

Շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա առթիվ:
1995թ. -ին ընդունելով ՀՀ Հիմնական օրենքը՝ մենք ԱՅՈՒ ասացինք քաղաքացիական
հասարակության ձևավորմանն ու ժողովրդավարական արժեքներին:

Հենց Սահմանադրությունն է կոչված ապահովելու քաղաքացիների բարեկեցությունն ու
պաշտպանելու մարդու հիմնարար իրավունքները:

Սահմանադրությունը, լինելով պետական խորհրդանիշ, անշուշտ, բոլոր ժամանակներում մեծ
դերակատարություն է ունեցել մեր պետականության կայացմանն ու զարգացման գործընթացում:

Սակայն, ինձ համար պետականության խորհրդանիշ է նաև իրավագիտակից Քաղաքացին, որը
ցանկանում է կառուցել այնպիսի Պետություն, որտեղ տիրում է օրենքի գերակայությունն ու
իրավահավասարություն:

Ըստ Սահմանադրության Հոդված 2-ի՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը
պատկանում է ժողովրդին :

Հիրավի՛, հենց ժողովուրդն է այն կարևոր առանցքը, որի շուրջ կառուցվում է Պետությունը:

Մարդի՛կ են այն արարող օղակները, որոնք այդքան անհրաժեշտ են այդ Պետությունն ամուր ու
անառիկ պահելու համար:

Սահմանադրություն, որով պաշտպանված են Քաղաքացու իրավունքները, Պետություն, որը հոգ
է տանում իր Քաղաքացու մասին և իրավագիտակից Քաղաքացի, ով պատրաստ է աջակցել
Պետությանը օրենքի գերակայությունն հաստատելու հարցում:

Ահա՛ բարեկեցության, սիրո ու համերաշխության իմ բանաձևը:

Եվս մեկ անգամ՝ շնորհավո՛ր ու ամենայն բարիք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ